

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ

Ս. Յ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԲԱԺԵՆԻՆ

Կիր. 20 Յուլիս 1952 Յ. Մ. Ժամբ 4ին, Ե. 2. Բարեխրախան Միտեթեան արանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թ. Վրժ. Ի. ամալեթի հանդէսը, նախագահութեամբ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրաէրեանի, Հանդէսը կատարուեցաւ մեծ շուքով և ի ներկայութեան Ս. Գալորեանց Միտարանութեան և Ժողովուրդի խառն բաղմութեան, Վարագոյրի բացումին՝ երգուեցաւ յոտնկայս «Որք զարգաբեցին Տնորինարար» Թարգմանչաց շարականը, յորմենեակ տեղի ունեցան արտասանութիւններ, երգեր, և տրամախօսութիւն մը Յ. Օշականի «ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ» յորընտիր Հոգ. Տեսուչը, կարգ տարեկան տեղեկագիրը, Ստորեկ կը զնենք զայն ամբողջութեամբ, Ստորեկ խորունկ գոհունակութեամբ մը կ'արձանագրենք այստեղ թէ, այս տարի ևս Ս. Թ. Վարժարանը ազգային ու կրօնական ոգիով լեցուն ու ինքնագիտակից 33 ընթացաւարտներ կը նուիրէ ազգին:

Տեղեկագրի ընթերցումէն վերջ տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը Զեռամբ Գեր. Տեղապահ Սրբազան Հօր, որ իր փառման խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ. — «Սիրելի ընթացաւարտ սան ու սանուհիներ, Զեղմէ շատերուն համար և թերևս ըստ ինքեան ալ, այս վկայականները մեծ արժէք մը չեն ներկայացներ յարաբերաբար ուրիշ վկայականներու: Բայց այս թուղթերը սկիզբն են այն մեծ գործին որ սկսած էք: Այս պահուս միտքս կուգայ իտալացի այն լեռնագնացը որ կը մտադրէ Ալպեան լեռներուն գագաթը բարձրանալ. բայց իր հայրենիքին ի պաշտպանութիւն հարկադրուած կ'ըլլայ պատերազմի երթալ: Հոն կը կորսնցնէ իր մէկ սրունքը: Սակայն չի կորսնցնէ իր յօշոր: Տարիներ ետք, փայտէ սրունքով մը կը բարձրանայ լեռան գագաթը, ու իր փայտէ սրունքը ցցելով իտալիայի կ'ըսէ. — Ես փայտէ սրունքով ալ կրնամ գագաթը բարձրանալ, բաւ է որ ուզեմ: Ես Զեղի, Սիրելի աշակերտներ, յաջողութեան գագաթներ բարձրանալու կարողութիւն ու յարատեւութիւն կը մաղթեմ»:



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐժԱՐԱՆԻ

1951-1952 ՏԱՐԵՇՐԱՆԻ

Գերաշնորհ Տեղապահ Սրբազան Հայր,
Գեր. Սրբազաններ, Հոգ. Հայրեր
և Գարգելի հանդիսականներ.

Խոնարհաբար կուգամ ներկայացնել Սրբոց Թարգմանչաց Վարժարանի տարուան մը կեանքին մեր տեղեկագիրը: Խորունկ գոհունակութեամբ կը ներկայացնեմ այս տեղեկագիրը անոր համար որ հակառակ Երուսաղէմի աղէտին ու մեզ չըջապատող մանաւանդ տնտեսական անըր-

պաստ պայմաններուն, մեր վարժարանը ինչպէս նախորդ՝ նոյնպէս աղէտին ներկայ չորրորդ տարին՝ կը փակէ նշանակելի արդիւնքներով:

1951 Հոկտեմբեր 1-ին կը վերաբացուէ թարգմանչաց վարժարանը 510 երկսեռ աշակերտներով որոնցմէ 260-ը հետեւեցան Մանկապարտէզի, իսկ 250-ը Նախակրթարանի դասընթացներուն: Այս թիւին վրայ տարւոյս ընթացքին հետզհետէ աւելցան 40 նոր փոքրիկներ, որով վարժարանիս բովանդակ աշակերտութեան թիւը ներկայ տարեփակին կը յանգի 550-ի:

Մանկապարտէզի աշակերտները ըստ նախընթացի բաժնեւած էին հինգ դասարաններու, իսկ Նախակրթարանը վեց դասարաններու:

Պատշտեալութիւն եւ ուսուցչական կազմ. — Տարեփակը մինչև Մարտ, վարժարանին տեսչական պաշտօնը վարեց աշակերտութեան և ուսուցչական կազմի լայն համակրանքը վայելող ու մեղր շատ սիրելի Հոգ. Տ. Սերոբէ վրդ. Մանուկեանը, սակայն Հոգեշնորհ Հայրապետը Զեղ Սրբազանութեան և Պատուաբաժան Տնօրէն Ժողովէն նշանակուած ըլլալով նուիրակ Ս. Աթոռոյ Հարաւային Ամերիկայի, ցաւ ի սիրտ պիտի ըսեմ որ զորոցն ներս իր ետև կը Զեղը զգալի բաց մը, այդ բացը զոցել վեր էր մեր ուժերէն և սակայն Զեղ Սրբազանութեան հրամանին ընդառաջելու մեր որդիական պարտքը կը ստիպէր մեզի մեր ուժերէն վեր յանձնառութեան մը, կը մաղթեմ որ չուտայ մեր մէջ ունենանք մեր սիրելի Հայր Սերոբէին, ու մեր վարժարանը անգամ մը ևս վայելէ անոր խնամքն ու սէրը:

Գալով ուսուցչական կազմին, Մանկապարտէզը ունեցաւ հինգ ուսուցչուհիներ, որոնք մեր փոքրիկներու լաւագոյն դաստիարակութեան համար ըրին իրենց կարելին գլխաւորութեամբ բազմամեայ Մանկապարտիկ պանուհի Օր. Տիգրանուհի Նալպանտեանի: Մանկապարտէզի ուսուցչական կազմին համար ընդհանուրն ունիմ գնահատանքի և շնորհակալութեան պարտք, և մասնաւորի Օր. Տիգրանուհի Նալպանտեանին որ իր փորձառու, խղճամիտ ու աշխիւ աշխատանքով գիտցած է լաւագոյն գլխաւորել ու կազմակերպել Մանկապարտէզի դաստիարակական գործը:

Նախակրթարանի ուսուցչական կազմը կը բաղկանայ վեց եկեղեցական և ութ աշխարհական ուսուցիչ (5) ուսուցչուհիներէ (3): Անոնց ջանասիրութիւնն ու խղճամիտ աշխատանքը մեծապէս նպաստեց մեր վարժարանի բարեօք գործունէութեան: Ու այս առթիւ անոնց նկատմամբ ես ունիմ միայն գնահատանքի ու ջերմ շնորհակալութեան խօսքեր:

Կրթական մակարդակ եւ ոգի. — Անվարան կրնամ վկայել Սրբազան Հայր որ Թարգմանչաց վարժարանի աշակերտը երբեք չէ կրնար դաւաճանել մեր եկեղեցական ու Ազգային ոգիին, շնորհի

ազգային բարոյական և հոգեկան այն առողջ
լատիարականութեան որ կը ջամբուէր այդ յարկէն
նոր, ու մանաւանդ շնորհիւ բարոյական հոգե-
կան տնտեսական այն սիրելի հովանաւոր հմայքին
որ Սրբոց Յակոբեանց Միաբանութեանն է հան-
դէպ այս վարժարանին, ինչպէս նախորդ տարի-
ներուն այս տարին ևս ոչ մէկ տկարացում ունե-
ցածք այս ուղղութեամբ, ու տունը էին որ
խորհին էր պատրաստելու համար մեր վարժա-
րանի տղաքը որպէս ազգասէր, կրօնասէր ու մա-
քուր նկարագրով հայեր, Ասոր համար մեր ժո-
ղովուրդի քաղաքական - եկեղեցական պատմու-
թիւնը, լեզուն, կրօնքը ուսուցուեցան անթերի,
ու ասիկա ոչ միայն վարժարանիս աշակերտու-
թեան այլ նաև կարելի չափով անկէ դուրս
գտնուող մեր նախկին աշակերտներուն, մասնա-
ւորապէս անոնց որոնք անդամներ են վարժա-
րանիս Նըջանաւարտից Միութեան, կազմակեր-
պելով զաստիճանութիւններ, վիճաբանական զե-
ղարկեցողական հանդիսութիւններ և այլն, կրօ-
նական նախանձախնդրութեամբ Ս. Զատիկի տօնին
մասնաւոր շրջաբերականով հրաւիրեցինք երկ-
րորդական օտար վարժարաններու հարիւրի մօտ
աշակերտները կատարելու իրենց կրօնական
պարտաւորութիւնները, մասնաւորապէս Ս. Զա-
տիկութեան իրենց մասնակցութեամբ, և ուրախ
ենք որ մեր կողմէն պատասխանեց անոնց բա-
ցարձակ մեծամասնութիւնը:

Իսկ դպրացիս կրթական մակարդակը ինչպէս
միշտ, այս տարին ևս զուգընթաց էր օտար նա-
խաթմարաններու կրթական մակարդակին, այն-
պէս որ մեր վարժարանէն ելլող շրջանաւարտ
մը առանց ընկերակցութիւն կրնայ հետևիլ օտար երկ-
րորդական վարժարաններու Ա. դասարանին, իսկ
ուշիմ շրջանաւարտուհիներն նոյնիսկ Բ. դասա-
րանին, Այս տարին կը զասաւանդուէին չորս լե-
զուներ, Հայերէն (Գրաբար և Աշխարհաբար),
Անգլերէն, Ֆրանսերէն և Արաբերէն, Լեզուական
հիւղին մէջ միակ թերութիւնը որ ունեցանք
Արաբերէնի տկար ուսուցումն է եղած, ինչպէս
միշտ նոյնպէս այս տարին վերջին երեք ամիս-
ներուն միայն բարձրագոյն երեք դասարաններու
Արաբերէնի ուսուցչին փոփոխութեամբ դիտուե-
ցաւ որ նոր ուսուցչուհին Օր. Շուշան Պապիկեան
զօհացուցիչ արդիւնք յառաջ բերաւ, Յառաջի-
կայ տարուան համար, բարձրագոյն դասարան-
ներու Արաբերէնի ուսուցման համար պիտի ու-
նենանք կարող ուսուցչի մը, իսկ Մաթէմատիք
ու ֆիզիկական դասեր զասաւանդուեցան անթերի
նախանձախնդրութեամբ:

Մեր դպրոցի Ազգային, Կրթական, բարոյա-
կան լաւագոյն աշխատանքին համար, Սրբազան
Հայր, ունիմ նաև վկայութիւնը օտար վարժա-
րաններու տնօրէններուն: Մեր բոլոր տղաքը
գրեթէ առանց բացառութեան Սրբոց Թարգման-
չաց վարժարանը աւարտելէ ետք, օտար երկ-
րորդական վարժարաններու մէջ յայտնաբերած
են շանտեր ոգի, բարոյական բարձր նկարագիր,
ազգային ու կրօնական ամուր կեցուածք, և այս

ձեռք անոնք Ս. Աթոռին, Զերդ Գերապատու-
թեան և բաւանդակ Միաբանութեան հիգն ու
զօհարեցութիւնները իրենց նկատմամբ ի թերե-
հէն հանած:

Մարզական կեանք. — Անոնք որ ներկայ եղան
անցեալ կիրակի ժառանգաւորաց վարժարանի
դաշտին՝ մեր տարեկան մարզահանդէսին, իրենց
համար աւելորդ պիտի ըլլար այս տեղեկագրին
մէջ մեր մարզական շարժումին համար արձա-
նագրութիւնը գնահատական խօսքերը, Սրբազան
Հայր, մեր զաշտահանդէսը կատարուեցաւ ի ներ-
կայութեան Միաբանութեան, օտար կրօնական
և կառավարական ներկայացուցիչներու և ժո-
ղովուրդի շատ խումբ քաղմութեան մը: Անոնք
բոլորը միաբերան ունեցան միայն գնահատանքի
արտայայտութիւն, մարդիկներու յայտնաբերած
օգիտ, հիգն, կարգապահութեան ու մարզական
արդիւնքին, յիշատակները մեր մարզահանդէսին
արդիւնքը եղաւ շատ խանդավառիչ, ու ասիկա
շնորհիւ այդ մարզին մէջ թափուած աշխատան-
քին, Զորս տարիներու մարզական կեանքին մէկ
բաղդատականէն գտանք որ իւրաքանչիւր տարի
հետզհետէ վարժարանիս մարզական ճիւղը բարե-
լաւուած է, տղաք դարձած են աւելի ճկուն և
ընդունակ, այս տարուան արդիւնքը անշուշտ
բարձրագոյնն է, հակառակ քաղաքիս տնտեսա-
կան անկումին արդիւնք՝ իրենց ճշունդի պակ-
սութեան: Մարզական գործը յանձնուած է վար-
ժարանի ուսուցիչներէն Պր. Կարպիս Ոհաննանի,
որ այս մարզին ինչպէս նաև կրթական միւս
մարզերուն մէջ ալ, հանդիսացաւ լաւագոյն օժան-
դակ մը վարժարանի տեսչութեան, հետևաբար
այս առթիւ ունինք իրեն համար գնահատանքի
և շնորհակալութեան խօսք:

Սկսնակական շարժում. — Տարեշրջանի վերջին
ամիսներուն ձեռնարկեցինք վերակազմել վար-
ժարանիս սկսնակական խումբը: Տղոց բաժինը
կ'ընթանայ զանգաղ կարգ մը թէքնիք պատճառ-
ներով որոնք յառաջիկայ տարեկիզբին պիտի
ըլլան հարթուած: Սկսած ենք սակայն զաստիճա-
նութիւններն և սկսնակական արշաւները որոնց
կը հետևին եռանդով մեր սաները:

Բալորովին նորութիւն մը եղաւ Արեւուայլից
և Արծնիկայից խումբերու կազմակերպումը
ազգայնաց բաժնին համար: Այժմ մեր խումբը
քաղաքիս միակն է և ամենէն ստուարը, քաղա-
քած 80 Արծնիկեներէ և Արեւուայլեներէ, Այս գոր-
ծին մէջ իրենց օժանդակութիւնը բերին նաև,
Ս. Թ. Շրջանաւարտից Միութեան կարգ մը ան-
ժամանակուած է իւրե պատասխանատու զվարժար-
նիս խումբին: Շնորհակալութիւն թէ իրեն և թէ իւ
ազնիւ օժանդակ օրիորդներուն:

Ս. Թ. Շրջանաւարտից Միութիւն. — Մեր աշխա-
տանքներու կարգին կարճէ յիշատակել նաև զի-
րենք, անոր համար որ անոնք կը գործեն վար-
ժարանէն ներս, տեսչի անմիջական հսկողութեան
ժարանէն ներս:

տակ ու այնպէս սերտիւ միաձուլուած վարժարանի ընդհանուր զրութեան հետ, որ կարծես ըլլան վարժարանի եօթերորդ դասարանը: Եռամսեայ կանոնաւոր ժամանակացոյցներով անոնք ամէն կիրակի կ'ունենան դասախօսական, վիճաբանական, գեղարուեստական, արշաւային հաւաքոյթներ, այսպէս առիթ ընծայելով մեր չըրջանաւարտ սաներուն ինքիւնքին միշտ զգալու զպրօքէն ու անոր ազգային ու կրօնաշունչ ոգիէն ներս: Անոնք նոյն ատեն (թէ և փոքր չափով մը) կ'աշխատին օժանդակել աղքատ ուսանողներու գրեական պիտոյից, անշուշտ իրենց կարելիութեան սահմաններուն մէջ: Անհրաժեշտ է որ տեսութեան կողմէ յատուկ ուշադրութիւն ներդրուի այս կազմակերպութեան, որովհետեւ լայն կարելիութիւններ կան այս կազմակերպութիւնը օգտագործելու ի շահ մեր վարժարանի ոգեկանին, բարոյականին և ընդհանուրն մեր ազգային-կրօնական ազգեցութեան տեականացման մեր վարժարանէն դուրս գտնուող երիտասարդուն մէջ:

Տնտեսական.— Նուազ խանդավառիչ է մեր վարժարանի տնտեսական կացութեան վերաբերող այս զուգը: Մեր աշակերտութեան հազիւ 1/2 վճարովի է. քանի մը բացառութիւններէ զատ մնացեալները բացարձակ մեծամասնութեամբ 1/3 կամ 1/4 նուազեցուած սակերով, ու այդ ալ կը դանձնէ հազարումէկ զօտարութիւններով և ըսի-ըսաներով: Կարելի է առարկել մերազնից չբաւարարութիւնը, և Ս. Բաղդաթ օրէ օր աճող տնտեսական զփախտութիւնը, և սակայն կարելի է մատնանշել պարագաներ ուր մարդիկ հակամէտ են աւելի օգտուիլ քան իրենց տարեթոշակներու կանոնաւոր վճարումներով օգնել այս փառաւոր Հաստատութեան որմէ այնքան լայնօրէն կ'օգտուին իրենց զաւակները: Մեր հաւաքած տարեկան ամբողջ վճարումները նաեւ կրնան փակել վարժարանիս երկու ամիսներու ծախքը միայն: Մեզի համար խղճի նշխարական պարտք կը սեպենք մեր կարօտ ուսանողներու ձրի դաստիարակութիւնը, և սակայն կը սպասենք որ նիւթապէս ինքնաբաւ մեր ազգայինները մտածեն աւելի լայն ու պատրաստակամ չափերով օժանդակել մեր կրթական գործին: Գիտցէք որ այդ օժանդակութիւնը ձեզմէ, ձեզի է որ կը վերադառնայ նոյնութեամբ օգտագործուելով միայն ու միայն Ձեր զաւակներու կրթական, բարոյական, ֆիզիքական բարեկեցութեան:

Դուրսէն մեր ստացած նպաստները չնչին բաներ են. Ս. Ն. Ր. Վ. Ա. էն կը ստանանք ամսական 15 տինար, ամիս մը առաջ միայն մատուար զիմուսի մը վրայ այդ գումարը բարձրացուցինք 8. 5. 20ի, Դարձեալ ստացած ենք 50 ձեռք նոր զգեստ և բաժնած մանկապարտէզի փոքրիկներուն: Իսկ Ամերիկահայ աղքատ ուսանողաց բարեկամներու Միութիւնը մեր բազմաթիւ կարօտ ուսանողներէն ստանձնած է 10 աշակերտներու տարեթոշակներուն ու գրեական պիտոյից ծախ-

քը: Անոնց բոլորին կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

Իսկ մեր տարեկան պաշարէն ունեցանք 100 տինարի մուտք մը:

Այս չնչին մուտքերէն դուրս սակայն մեր վարժարանը ունի եւլի խոշոր պիւտոնէ մը տարեկան մօտ 2000 տինարի, (Պաղեստինեան պատերազմի ընթացքին ուսմանը, և վարժարանէն ներս բանակող զինուորներէն աւերուած են մեծ մասը վարժարանի կահերուն և մանկավարժական պիտոյքներուն որոնք հետզհետէ կը նորոգուին) որ ամբողջութեամբ կը ծանրանայ Ս. Յակոբեան Միաբանութեան ուսին: Ու մենք Սրբազան Հայր, այս հանդիսաւոր առիթով ի զիմաց Սաղիմայ հաստատութեան միայն ու միայն շնորհակալութեան ու խոր երախտագիտութեան խօսքեր ունինք Ձերդ Սրբազնութեան և բովանդակ Միաբանութեան նկատմամբ, որ հակառակ վանքի տնտեսական ամենէն ընկճուած կացութեան ոչ մէկ բան կը խնայէք չի նուազեցնելու համար փայլը մեր լոյսի հաստատութեան:

Երուսաղէմահայութիւնը հիացումով միայն կրնայ զիտել թէ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինչ գուրգուշոտ սէր ու խնամք ունեցած է իրենց զաւակներու դաստիարակութեան ու այս մեծ դաստան նկատմամբ, անոր հաստատութիւնէն մինչև այսօր, ու իրաւ ալ մեր վարժարանի բոլոր այցելուները կը մեկնին անկէ խոր գոհունակութեամբ՝ ի տես անոր փառայիշչէն քին, մաքրութեան, կարգապահութեան, դասաւանդութեանց կանոնաւորութեան, ջանքուած ոգիին, ուսման բարձր մակարդակին, ևլն:

Ուրախ եմ յայտնելու նաև Սրբազան Հայր, որ մեր աշակերտները ի թերեւ չեն հանած Սրբոց Յակոբեանց Միաբանութեան այս սէրն ու զոհերութիւնը, որովհետև մեր վարժարանէն դուրս ուր ալ գտնուած ըլլան անոնք օտար թէ չայ վարժարաններու, պաշտօնատուներու և կեանքի զանազան ասպարէզներուն մէջ, անոնք յիշատակուած են զօվետով ու գրաւած բացառիկ դիրքեր:

Այժմ Ձերդ Սրբազնութեան կը ներկայացնեմ մեր վարժարանին թիւով 33 ընթացաւարտ սաները որոնք կուզան աւելնալ վարժարանէն մեկնած հարիւրաւոր ընթացաւարտներու փաղանգին:

Անոնցմէ հետեւեալ 13ը կը վկայուին վարժարանիս Պատուոյ վկայականով:—

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1. Աննա Գեորգեան | 8. Դուլիք Գալպանեան |
| 2. Հայկանուէր Տրաւաթեան | 9. Խաչիկ Տիգրայիկեան |
| 3. Հովսէփմի Կարապետեան | 10. Հայկազ Ազատեան |
| 4. Մարի Տ. Մարտոսեան | 11. Յարութիւն Յակոբեան |
| 5. Մելիքէ Եղիսեան | 12. Յարութիւն Չաղրեան |
| 6. Սաբեմիկ Պապիկեան | 13. Սարգիս Շնորհաւորեան |
| 7. Վեհանուէր Ուրմայեան | |

Իսկ մնացեալ 20ը կը ստանան աւարտական վկայականներ:

Կը խնդրեմ Սրբազան Հայր, որ անոնց վերադարձներու բաշխումին հետ օրհնէք նաև զիրենք, որոնք Զեր օրհնութեանց ընդմէջէն անոնք զառնան արգասաբեր ու պտղաբեր, ըլլալով համար հպարտանքի առիթ զիրենք կերտող լեցնող մեր սիրելի Ս. Աթոռին և Սրբոց Թարգմանչաց Վարժարանին:

Փակելէ առաջ իմ տեղեկագիրը կը յայտնեմ իմ շնորհակալութիւններս վարժարանիս յարգելի և սուսցնական կազմին, որ նսւիրումով, սիրով և զօնողութիւններու գինով զօրավիգ կանգնեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի դաստիարակական մեծ աշխատանքին:

Ի վերջոյ շնորհակալութեան խոշոր բաժին մ'ունիմ Զեր Սրբազանութեան նկատմամբ, բոլոր անքաջաբեր օժանդակութեանց համար որ երբ և իցէ չի զլացաք մեր նկատմամբ: Պաշտօններու իրագործումը յաճախ նիւթական շատ մը աղակներէ անդին արդիւնք են տրամադրութեանց, հոգեկան վիճակներու, ու դուք Սրբազան Հայր, ըրիք Զեր կարելին ի հաշիւ այդ տրամադրութեան, հոգեկան արդիւնարար վիճակներուն, ընթացք տալով մեր բոլոր խնդրանքներուն, ու ամէն անգամ մեզ զիմաւորելով Զեր հայրական բարի ժպիտովն ու հոգիին ազնուութեամբը, որ մեզի համար բարձր է ամէն գնահատանքէ: Ու թոյլ տուէք Սրբազան Հայր, ըսելու որ ատով օկ Զերն է ինչ որ կը գտնէք մեր տեղեկագրէն իբրեւ լաւ ու բարի — Զեղմէ Զեղի վերադարձումը:

Իսկ եթէ կան թերիւներ հաճեցէք զանոնք վերադրել մեր անձին տկարութեան որուն համար եղէք ներողամիտ:

ԿԻՒՐԵՂ ԱՅԵՂԱՅ ԴԱՐԻԿԱՆ
ՏԵՍՈՒՑ Ս. Թ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Երասպէմ,
20 Յուլիս 1952

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Ս. Աթոռէն ներս, Յուլիս ամսոյ ընթացքին, հետեւեալ վարչական փոփոխութիւնները կատարուած են:—

Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տարեկան Ընդհ. ժողովը, Տնօրէն ժողովոյ վիճակաւ զադարեալ անդամներուն տեղ ընտրեց Հոգ. Տ. Միւսնի վրդ. Կրէնիկեանը և վերընտրեց Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արարահամեանը և Հոգ. Տ. Պարգև վրդ. Վրթանէսեանը:

Ս. Աթոռոյ Միաբաններէն Հոգ. Տ. Սերոբէ վրդ. Մանուկեան, նշանակուած ըլլալով Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի Պատուիրակ եւ րոպայի թիմին, և առաջնորդ Բարիկի և Նրջակայից, Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն ժողովը իր փոխարէն ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի տեսուչ կարգեց Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Արարահամեանը:

Դարձեալ Հոգ. Տ. Սերոբէ վրդ. Մանուկեանի տեղ, Ս. Աթոռոյ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի տեսուչ ընտրուեցաւ Հոգ. Տ. Կիրեղ Արդ. Դարիկեան:

Ս. Աթոռոյ Տպարանի տեսուչ նշանակուեցաւ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչիւնեան:

Ս. Աստուածածնայ Տաճարին, Ս. Փրկչի վանուց և Կիւլպէնկեան Մատենադարանի տեսուչ նշանակուեցաւ Հոգ. Տ. Անուշաւան Արդ. Զըղ-Ջանեան:

Ս. Հրեշտակապետաց վանուց առժամեայ տեսուչ նշանակուեցաւ Հոգ. Տ. Վարուժան Արդ. Դապարահեան որ նոյն ատեն պիտի վարէ նաև Ս. Աթոռի չորատան տեսութիւնը:

Հիայոյս ենք որ վերոյիշեալ բոլոր Հոգ. Հայրերը իրենց նոր պաշտօնները պիտի կատարեն անթերի խղճմտութեամբ ի փառս Ս. Աթոռին և մեր ժողովուրդին:

Յաջողութիւն կը մաղթենք իրենց:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԼճՏՈՒՆԻ հոգեւոր հովիւ Հոգ. Տ. Պապ վրդ. Թումանյանի նախաձեռնութեամբ, ԼճՏՈՒՆԻ հոգեւոր Տէր և Տիկին եղբարք եւ Եւսեմնիկ Պէնյան ամբողջ իրենց ամուսնութեան 25-ամեայ արծար յոբելանի ճոխարմութեան առիթով, օրհնակելի եւ գեղեցիկ գաղափար ունեցած են օրհնելով Ս. Արարոյս ժառանգաւորաց վարժարանէն սան մը:

ՍԻՈՆ այս առիթ իր օրագին ճանաչակալութիւնները կը յայտնէ ազգասէր եւ դպրոցամօտ ամօլին, եւ մաղթէ որ Տէր երկու երջանիկ ասրներ պարգեւէ, հասցնելով զիրենք իրենց աղամանդեայ յոբելանի ճոխարմութեան, եւ հայ կրթութեան ի նպատակ իրենց տուած մէկի փոխարէն հազարապատիկ վարձահասոյց ըլլայ:

Ժառ. Վարժարանէն ժամիս եւ քաղաքային փոքրիկ Սողոմոն Էլիենեան յետ այսու պիտի կոչուի Պէնյան Սան:

